Վեկտորային գրաֆիկա. CorelDRAW

Coreldraw դասընթացը հասցեագրված է գրաֆիկական դիզայներներին, համակարգչային մակետավորման ուսանողներին:

Այս դասընթացի ընթացքում նախատեսվում է սովորեցնել վեկտորական խմբագրի հիմնական աշխատանքային գործիքներին, որոնք անհրաժեշտ են ստեղծագործական խնդիրներ լուծելու համար, ինչպիսիք են լոգոների ստեղծումը, նկարազարդումները, նախագծային աշխատանքները և այլն: Այն բաղկացած է երկու մակարդակից:

Առաջին մակարդակը հնարավորություն է տալիս սովորողներին ստանալ սպառիչ գիտելիքներ ամենօրյա աշխատանքի և հմտությունների բարելավման համար:

Երկրորդ մակարդակը նպատակ ունի կազմավորելու լիարժեք մասնագետներ, որոնց աշխատանքը հիմնականում կապված է կրեատիվության հետ:

Coreldraw ամբողջական դասընթացն իր մեջ ներառում է՝

- Թեմա 1 — Ներածություն
- Թեմա 2 — Վեկտորային գրաֆիկա: CorelDRAW ծրագրի ինտերֆեյսը
- Թեմա 3 — Գույնը և գունային մոդելները վեկտորային գրաֆիկայում
- Թեմա 4 — Կոնտուրներ
- Թեմա 5 — Պարզ օբյեկտների ստեղծումը և պահպանումը վեկտորային գրաֆիկայում
- Թեմա 6 — Լիցքեր և եզրագծեր
- Թեմա 7 — Բարդ օբյեկտների ստեղծումը պարզ օբյեկտների միջոցով
- Թեմա 8 — Copy, Clone, Dublicate հրամաններ
- Թեմա 9 — Շերտեր
- Թեմա 10 — Effect մենյուն
- Թեմա 11 — Սահուն անցման էֆեկտ
- Թեմա 12 — Կրկնվող կոնտուրների էֆեկտ
- Թեմա 13 — Թաղանթի էֆեկտ
- Թեմա 14 — Եռաչափ պատկերի էֆեկտ
- Թեմա 15 — Թափանցիկության էֆեկտ
- Թեմա 16 — Ոսպնյակի Էֆեկտ
- Թեմա 17 — Շողքի էֆեկտ
- Թեմա 18 — Գծային հեռանկարի էֆեկտ
- Թեմա 19 — Bitmaps մենյու
- Թեմա 20 — Աշխատանք տեքստի հետ CorelDRAW ծրագրում
- Թեմա 21 — Տեքստի վերադասավորումը ըստ կոնտուրների
- Թեմա 22 — Տպման պարամետրեր և կոշտ պատճենի ստացում

Դասընթացի ընթացքում մասնակիցները կկատարեն առաջադրանքներ, որոնց արդյունքում կիրականացվեն քննարկումներ:

Դասընթացը կանցկացնի համալսարանի Ինֆորմատիկայի, ՀՏ և ԿՀ ամբիոն ամբիոնի դասախոս Մարիա Մկրտչյանը:

Տևողությունը 36 ժամ՝ շաբաթական 3 պարապունք 2 ժամով:

Արժեքը՝ 60000 ՀՀ դրամ: